ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՊԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՅԻ (1992 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ) ՕՐԻՆԱԿՈՎ *

ՀՏԴ 930 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-164*

ԷԴԳԱՐ ԷԼԲԱԿՅԱՆ
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի
հայոց պատմության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
elbakyan.edgar@gmail.com
ORCID: 0009-0008-9912-8966

Սույն հոդվածի հետազոտության օբյեկտը ադրբեջանա-հայկական ռազմական հակամարտության ընթացքում հայկական ռազմաքաղաքական ղեկավարման համակարգն է, իսկ հետազոտության առարկան՝ Հայաստանում ռազմաքաղաքական ղեկավարման համակարգի ձևավորման և դրսևորման առանձնահատկությունները Կապանի ինքնապաշտպանական օպերացիայի օրինակով: Մեր առջև դրված նպատակը, որին փորձել ենք հասնել բովանդակային վերլուծության որակական մեթոդի միջոցով, Հայաստանում ռազմաքաղաքական ղեկավարման համակարգի ձևավորման առանձնահատկությունները Կապանի ինքնապաշտպանական օպերացիայի օրինակով վերհանելն է՝ որպես բեկումնային գործողության դրսևորում: Հոդվածը ունի հետազոտական հինգ խնդիր՝

1. ***նկարագրել 1992 թ.-ի երկրորդ կեսին ադրբեջանա-հայկական ռազմաճակատում առկա օպերատիվ դրությունը,***
2. ***վերլուծել գործողության պլանավորման և իրականացման գործընթացները,***
3. ***վերհանել հիմնական դերակատարների մասնակցությունը որոշումների կայացմանը,***
4. ***ռազմագիտական ձևակերպում տալ օպերացիայի հիմնական բնութագրիչներին,***
5. ***հիմնավորել օպերացիայի նշանակությունը ռազմաքաղաքական ղեկավարման համակարգի կայացման համաշարում և պատերազմում բեկում մտցնելու հարցում:***

Սույն հոդվածի արդիականությունը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով: Նախ՝ այն նպաստում է ադրբեջանա-հայկական ռազմական հակամարտության գիտական ուսումնասիրության դաշտի հարստացմանը՝ խնդրո առարկա դարձնելով տակավին ակադեմիական գրականությանն անհայտ մի յուրահատուկ պատմական դրվագ: Երկրորդ՝ հոդվածն ունի կիրառական նշանակություն՝ ճգնաժամային իրավիճակներում ռազմաքաղաքական կառավարման համակարգերի ձևավորման և գործառման

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2025թ., գրախոսվել՝ 10.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

«սոցիալական տեխնիկայի» վերարտադրելիության տեսանկյունից: Հոդվածին արդիականություն է հաղորդում նաև այն հանգամանքը, որ ինչպես քննվող շրջանում (1992 թ.), այնպես էլ հոդվածի գրման պահին հայ-ադրբեջանական դե-ֆակտո ռազմաճակատը թե՛ Կապանի, թե՛ առհասարակ Սյունիքի արևելյան հատվածում ունի նույնական կոնֆիգուրացիա, ինչը թեմային հաղորդում է ռազմաքաղաքական հավելյալ նշանակություն: Հոդվածի գիտական նորույթն այն է, որ Կապանի ինքնապաշտպանական օպերացիան առաջին անգամ դառնում է առանձին հետազոտության առարկա ակադեմիական ժանրում՝ ըստ որում՝ վերլուծվելով ոչ թե մեկուսացված, այլ պատերազմի՝ տվյալ ժամանակահատվածի ռազմաքաղաքական համաշարի մեջ:

Մեր հիմնական եզրահանգումներից է այն, որ Կապանի օպերացիան բեկում մտցրեց ոչ միայն օպերատիվ մակարդակում ռազմաճակատի տվյալ հատվածում, այլև առհասարակ պատերազմի կազմակերպման քաղաքական ռազմավարության մեջ՝ հարձակողական նախաձեռնողականության և պատերազմի աշխարհագրությունը որոշելու մենաշնորհը խլելով թշնամու ձեռքից:

Հիմնաբառեր՝ *Կապանի ինքնապաշտպանական օպերացիա, ադրբեջանա-հայկական ռազմական հակամարտություն, Կապան, Վազգեն Մանուկյան, Յուրի Խաչատուրով, ռազմաքաղաքական ղեկավարում, Կապանի ապաշրջափակում:*

Ներածություն

Սույն հոդվածի մեթոդաբանական մոտեցումը որակական հետազոտությունն է: Հաշվի առնելով դեպքերի ակադեմիական ուսումնասիրվածության բացակայությունը՝ մենք որդեգրել ենք տարբեր աղբյուրատեսակների համադրումը, որ հնարավորություն է տալիս պարզելու գործողության ամբողջական պատկերը: Որպես աղբյուրատեսակ են ընտրված դեպքերի մասնակիցների վկայությունները, նրանց հետ ինչպես նախկինում, այնպես էլ մեր կողմից արված խորքային հարցազրույցները և բնականորեն տեղի ունեցող զրույցները, որոնք թույլ են տալիս առաջին ձեռքից տեղեկություններ ստանալ ուսումնասիրվող թեմայի մասին: Մյուս աղբյուրատեսակը գրավոր աղբյուրներն են, գերազանցապես՝ մամուլի արխիվային հրապարակումները, ինչպես նաև տեղացիների հիշողությունները, որոնք հավաքագրվել են «ժողովրդական հաղորդումների» (*crowdsourcing*) միջոցով՝ համադրելով և ստուգարկելով դրանք մնացյալ աղբյուրատեսակներից ստացված տեղեկությունների հետ:

Պակասող սկզբնաղբյուրագիտական բազան համալրելու համար հեղինակն անցկացրել է խորքային հարցազրույցներ, ինչպես նաև բնականորեն տեղի ունեցող զրույցներ Յու. Խաչատուրովի (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»; Էլբակյան, «Զրույց Յուրի Խաչատուրովի հետ»), Վ. Մանուկյանի (Մանուկյան), Մուրազ Սարգսյանի (Էլբակյան, «Զրույց Մուրազ Սարգսյանի հետ»), Աշոտ Մինասյանի (Էլբակյան, «Զրույց Աշոտ Մինասյանի հետ») հետ: Հեղինակային հարցազրույցները հնարավորություն են տվել համադրելու հարցազրույցյալների՝ տարբեր տարիներին և տարբեր ձևաչափերում հնչեցրած վկայությունները՝ դրանց ինքնաստուգարկման միջոցով ապահովելով ոչ միայն փաստական հավաստիության բարձր աստիճան, այլև առավելագույնս նվազեցնելով հարցազրույցի պահին գործող ռազմաքաղաքական իրավիճակից ազդված լինելու հավանականությունը:

Սույն հոդվածում կիրառված է բովանդակային վերլուծության որակական մեթոդը, որ հնարավորություն է տալիս քննահեն համադրության ենթարկելու պատումային վկայությունների, գրավոր աղբյուրների և ժամանակաշրջանի

ռազմաքաղաքական իրադրության համակարգային վերլուծությունների արդյունքները՝ հասնելով ուսումնասիրության առջև դրված խնդիրների կատարմանը:

Ռազմաքաղաքական դրությունը 1992թ. երկրորդ կիսամյակում

Չնայած 1992 թ. մայիսի 9-ին և 18-ին Շուշիի և Լաչինի ազատագրմանը, Արցախի ու Սյունիքի միջև ցամաքային կապի հաստատմանը՝ հաջորդող դեպքերը բավականին ծանր եղան հայության համար: Ի տարբերություն հայկական կողմում շատերին համակած էյֆորիայի՝ ադրբեջանական կողմն Արցախի ամբողջական գրավումը սահմանել էր որպես պետական խնդիր: Արդեն մայիսի 10-ին թշնամին ռազմաճակատի կենտրոնական ուղղությամբ անցավ կատաղի հարձակման՝ գրավելով Ասկերանի շրջանի Նախիջևանիկ, Վարդաձոր, Վարազաբուն, Սառնաղբյուր և Դահիրազ գյուղերը՝ արևելքից ընդհուպ մոտենալով մայրաքաղաք Ստեփանակերտի մատույցներին: Իսկ արդեն մեկ ամիս անց՝ հունիսի 12-ին, Ադրբեջանը Գանձակում տեղակայված նախկին խորհրդային բանակի ստորաբաժանումների աջակցությամբ լայնամասշտաբ հարձակման անցավ՝ գրավելով ամբողջ Շահումյանի շրջանը, ապա Մարտակերտ շրջկենտրոնը և շրջանի դաշտային հատվածի մեծ մասը: Հունիսյան այդ օրերին թշնամին ամենավճռորոշ՝ կենտրոնական ուղղությամբ, երբեմն հասնում էր Ասկերան քաղաքի մատույցներում գտնվող գարեջրի գործարանի տարածք: Օգոստոսի կեսից Ադրբեջանն սկսեց իրեն տեր զգալ նաև օդային տարածքում. թշնամու օդուժը հետևողական հարվածներ էր հասցնում Ստեփանակերտին և այլ բնակավայրերին (Էլբակյան, «Պատմության առջև», 00:01:31-00:09:02):

Ակնհայտ էր դառնում, որ պատերազմի կազմակերպման հախուռն ջոկատահեն համակարգն անկարող է դիմակայել կազմակերպված բանակային հարձակմանը: «*Մոտիկից տեսա, թե ինչ է ֆիդայական կռիվը. զոհը շատ էր, արդյունքը՝ քիչ*»,- պատերազմի այս շրջանի մասին հետագայում իր հուշերում գրել է ՀՀ ԶՈՒ գլխավոր սպայակույտի առաջին պետ, գեներալ-լեյտենանտ Գուրգեն Դալիբալթայանը (Այվազյան 128):

Ռազմական անհաջողությունները տրամաբանորեն հանգեցնում էին նաև քաղաքական ճգնաժամի ինչպես Երևանում, այնպես էլ Ստեփանակերտում: Երևանում կատաղի պայքար էր սկսվել իշխող Հայոց համազգային շարժման և հավաքական ընդդիմության միջև, իսկ Ստեփանակերտում դե-ֆակտո երկիշխանություն էր դեռ 1992 թ. հունվար ամսից: Բանն այն է, որ հունվարին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններում հաղթանակ էր տարել Հայ հեղափոխական դաշնակցությունը, նախագահ էր ընտրվել դաշնակցական Արթուր Մկրտչյանը: Պայմանավորված, սակայն, ՀՀՇ-ՀՅԴ խորքային հակասություններով՝ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նախընտրում էր Արցախում կապ պահել ԳԽ պատգամավոր Ռոբերտ Քոչարյանի, Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի ղեկավար Սերժ Սարգսյանի և նույն կոմիտեի անդամ Սամվել Բաբայանի հետ (Հակոբյան 196; Էլբակյան, «Զրույց Բորիս Առուշանյանի հետ»): Դե-ֆակտո և դե-յուրե իշխանական թևերի միջև տարբերությունը տեսականորեն կարող էր հաղթահարվել Գերագույն խորհրդի նախագահի նոր ընտրություններով, որ անհրաժեշտ էր դարձել ապրիլ ամսին Ա. Մկրտչյանի մահվան պատճառով: Հունիսի 3-5-ին անցկացված Գերագույն խորհրդի նստաշրջանում նախագահի ընտրության նիստերն անցան ծայրահեղ լարված մթնոլորտում: Գերագույն խորհրդի նախագահի ընտրության երեք փուլերն անցան ապարդյուն. ընտրություն չկայացավ (Էլբակյան, «Պատմության առջև», 00:13:00-00:17:52): Քաղաքական ճգնաժամը հաղթահարվեց միայն 1992 թ. օգոստոսի 14-15-ին, երբ Գերագույն խորհրդի և նախարարների խորհրդի համատեղ նստաշրջանը համաձայնեց ստեղծել օրենսդիր, գործադիր և կարգադրիչ նոր մարմին՝ Պաշտպանության պետական կոմիտեն՝ վերջինիս

փոխանցելով սեփական լիազորությունները: Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ որոշվեց Ռոբերտ Քոչարյանը (Էլբակյան, «Պատմության առջև», 00:23:53-00:25:38):

Ծավալած լինելով Արցախի գրավման լայնամասշտաբ օպերացիա՝ Ադրբեջանը ուժերի կաշկանդման օպերատիվ-մարտավարական գործողություններ էր իրականացնում նաև հայ-ադրբեջանական դե-ֆակտո սահմանի մնացած բոլոր տեղամասերում՝ ապագա Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմաններում, Նախիջևանի հատվածից՝ ապագա Արարատի և Վայոց Ձորի մարզերի սահմաններում: Բարդ էր դրությունը մանավանդ Սյունիքում և նամանավանդ՝ Կապանի հատվածում: 1992 թ. ապրիլի վերջից սահմանային ընդհարումները թշնամու կողմից վերածվեցին իրական մարտական գործողությունների: Ապրիլի 24-ի առավոտյան սկսեց հրետակոծվել Կապան քաղաքը (Առաքելյան 4): Հաշվի առնելով, որ դեռևս 1991 թ. հունվարից փակված էր Կապան-Գորիս մայրուղին (Մինասյան 11), Կապանի մատույցներում փակ էր Սյունիք սովտնտեսություն-Կապան ճանապարհը (Էլբակյան, «Զրույց Մուրազ Սարգսյանի հետ»), և Հայաստանի հարավային թևը կապվում էր մնացյալ երկրի հետ միայն Աղվանի-Տաթև կիսապատրաստ ճանապարհով, կարելի է պնդել, որ Ադրբեջանը տեղային մակարդակում կիրառում էր Կապանի շրջափակման մարտավարություն, ինչի օպերատիվ նպատակներից էր Արցախին ուղղվող ուժերն ու միջոցները կաշկանդելը, իսկ ռազմավարական հեռանկարում՝ ապագա Սյունիքի մարզի ժողովրդագրական և ենթակառուցվածքային անկմանը, տարածքի մասնատմանը և հետագա գրավմանը հասնելը:

Ապրիլի 15-28-ն ընթանում են մարտեր Կապանի պաշտպանության և ապաշրջափակման համար, որոնց մասնակցում է ինչպես փետրվար-ապրիլ ամիսներին ձևավորված տեղի գումարտակը, այնպես էլ Սիսիանի «Սիսական» գումարտակը: Վերջինիս մարտիկներին հաջողվում է ապրիլի 24-26-ին ազատագրել թշնամական կրակակետի վերածված Ղազանչի և Աղքենդ բնակավայրերը, որտեղից թշնամին ոչ միայն հրետակոծում էր Կապանը և հարակից գյուղերը, այլև դիվերսիոն հարձակումներ գործում Սյունիքի սովտնտեսության և Կապանի օդանավակայանի ուղղությամբ: Գործողությունը նշանակալի էր, ուստի՝ տեղ գտավ նաև բանակի օպերատիվ ամփոփագրերում (Օհանյան 52): «*Ղազանչիի և Աղքենդի ազատագրումից հետո տեսա, որ մեր մարտիկները շրջում են Կապանում՝ փոխանակ դիրքերում լինելուն: Պարզվեց, որ նման հրաման է տվել կադրային զինվորական գեներալ-մայոր Մուրազ Սարգսյանը՝ հիմնավորելով, որ այն, ինչ մենք արել ենք, կոչվում է «военная окупация*»»,- պարզաբանում է «Սիսականի» շտաբի պետ Աշոտ Մինասյանը (Էլբակյան, «Զրույց Աշոտ Մինասյանի հետ»): Իր հերթին Մ. Սարգսյանը, խոսելով այդ օրերի մասին, շեշտադրում է Կապանի օդանավակայանին հարող դե-ֆակտո սահմանային ճանապարհի երկայնքով հողապատնեշներ կառուցելու և Կապանը սնուցող շրջանցիկ ճանապարհներ անցկացնելու հանգամանքը (Էլբակյան, «Զրույց Մուրազ Սարգսյանի հետ»): Ինչպես տեսնում ենք, այդ ընթացքում երկրի քաղաքական իշխանության կողմից հրամանատարության առջև դրված է եղել զուտ սահմանափակ խնդիր՝ ինչ-որ կերպ կայունացնելու վիճակը, կանխելու Կապանից և շրջանի գյուղերից բնակչության զանգվածային արտահոսքը: Ադրբեջանի կողմից մարտական գործողությունների թատերաբեմի հետևողական խորացումը և հակամարտության աշխարհագրության ընդլայնումը, սակայն, հուշում էին, որ դա անհնար է առանց ճակատում և թշնամական ուժերի խորքում գտնվող կրակակետերի ոչնչացման:

Ինչպես Ստեփանակերտում, Երևանում ևս ռազմական անհաջողությունները հանգեցնում էին քաղաքական ճգնաժամի: Օրհասական պահին Արցախի օրինակով ներքաղաքական պայքարը դադարեցնելու և ուժերի միավորման գաղափար կար նաև Երևանում: Ըստ այդ ժամանակ արդեն ընդդիմադիր քաղաքական գործիչ Վազգեն

Մանուկյանի հուշերի՝ «*Մարտակերտի մոտ … ես առաջին անգամ հիշեցի այն գրքերը Ցեղասպանության մասին, որ կարդացել էի ու պապիս պատմածները… Անտառի մեջ արահետ էր, և ծառերից կախված էին մանկական խաղալիքներ, թաշկինակներ: … Վրդովված, որ կորցնում ենք հողերը, մենք բանակցություններ սկսեցինք իշխանությունների հետ, Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, որ կոմիտե ստեղծվի, որին մասնակցեն նաև ընդդիմադիրներ, այսինքն՝ մի կողմ թողնենք ընդդիմադիր-իշխանություն…*» (Լազարյան 00:03:44-00:04:35):

Պատերազմի կազմակերպչական ձախողման փաստն ակնհայտ էր, և աստիճանաբար պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի հրաժարականի հարցն սկսում է լայն քննարկման առարկա դառնալ ինչպես քաղաքական, այնպես էլ հրապարակախոսական շրջանակներում: Հաշվի առնելով Վ. Սարգսյանի քաղաքական առանցքային դերակատարումը՝ որպես նոր իշխանության հենարաններից մեկը՝ հրաժարականի հարցը բազմակի անգամ բարդանում և ձգձգվում էր: Պատերազմի ընթացքը բեկելու փորձ արվեց հենց Վ. Սարգսյանի հեռուստաուղերձով (15 օգոստոսի 1992 թ.), որով պաշտպանության նախարարը դիմեց հանրությանը՝ արցախյան ռազմաճակատի ամենաբարդ տեղամասերում կռվելու համար հավաքագրելու 500 հոգանոց մահապարտների գումարտակ: «*Եթե չհավաքվեցինք, այն ժամանակ ես կհամարեմ, որ իսկապես իմ հրաժարական տալու ժամանակը եկել է*» (Սարգսյան, «Հեռուստաուղերձ»): Հավաքված շուրջ 500 հոգուց ի վերջո ընտրվեցին 375 ազատամարտիկներ:

Այս նախաձեռնության՝ օպերատիվ և ռազմավարական պլանավորման մակարդակներում անբավարար լինելն ապացուցվում է նաև վիճակագրորեն: Այսպես՝ մեր հաշվարկներով՝ հիմնված «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ» հանրագիտարանում հրապարակված զոհված ազատամարտիկների անվանացանկի վրա՝ 1992 թ. հունիսի 12-ից հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում օրական միջին հաշվարկով զոհվում էր 8,27 ազատամարտիկ (Էլբակյան, «Արցախյան առաջին հաղթական պատերազմի տարիներին հայկական զինված ուժերի կորուստների վերլուծություն»): Սա նշանակում է, որ 500 հոգանոց գումարտակով յուրային զորքերի համալրումը վիճակագրորեն կարող էր ևս 2 ամսով կայունացնել վիճակը, իսկ իրականում ընտրված 375-ով՝ 1,5 ամսով: Ի պատիվ «Մահապարտներ» գումարտակի կենդանի և զոհված ազատամարտիկների՝ պետք է նշել, որ Մարտակերտի ուղղությամբ՝ Վանքի հատվածում, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գումարտակը լուծեց տվյալ տեղամասում ռազմաճակատի գծի կայունացման խնդիրը: Սակայն դա հաջողության տեղային, ժամանակավոր և ոչ շարունակական ձևակերպ էր:

Որպես ներքաղաքական զիջում՝ իշխանությունները՝ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, համաձայնում են պաշտպանության հարցում կիսել իշխանությունն ընդդիմության հետ: Սեպտեմբերի 11-ին Վ. Մանուկյանը նշանակվում է ՀՀ պետական նախարարի պաշտոնակատար՝ պաշտպանության հարցերը կոորդինացնելու պարտականությամբ («Հայաստանի Հանրապետություն», 12.09.1992, 1): Վերջինս ընդգրկվեց նաև ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի կազմում: Ճգնաժամային պահին իշխանությունը կիսելու ուղեգծի շրջանակներում այդ խորհրդի կազմում ներառվեցին նաև Ռամկավար ազատական կուսակցության, ՀՅԴ՝ ԳԽ-ում ներկայացված կուսակցական խմբակցությունների լիազոր-ներկայացուցիչներ («Հայաստանի Հանրապետություն», 12.09.1992, 1):

Այդ շրջանում՝ սեպտեմբերին, դրությունը հատկապես վատացավ Լաչինի մարդասիրական միջանցքում: Այդտեղի պաշտպանությունն իրականացվում էր ուղղակիորեն ՀՀ ՊՆ ղեկավարությամբ, ինչը հավելյալ սրություն էր հաղորդում Երևանում շարունակվող ներքաղաքական լարվածությանը: «… *Հավաքեցինք [ջոկատներին] ես՝ որպես պետնախարար, Վազգեն Սարգսյանը՝ որպես նախարար…*

Ասեցինք, որ շատ ծանր է վիճակը, Վազգեն Սարգսյանը խնդրեց, որ մյուս օրը առավոտյան հավաքվեն և մեքենաներով գնան Լաչին: Մյուս օրը ոչ մեկը չեկավ: Երկրորդ նիստը արեցինք, ես էլ դիմեցի: Չեկան: Այդ ժամանակ ես Վազգեն Սարգսյանին դիմեցի, ասեցի՝ եթե ջոկատները քեզ չեն լսում, դու պաշտպանության նախարար աշխատել չես կարող, պիտի դուրս գաս: Վազգեն Սարգսյանը նեղվում էր, բայց ինքը համաձայնվեց» (Գրիգորյան 00:04:10-00:04:43): Վ. Սարգսյանի «նեղվելու» և պաշտպանության նախարարի պաշտոնից հրաժարվելու դժկամության փաստը հաստատվում է ինչպես ժամանակակիցների հուշերով, այնպես էլ պաշտոնանկությունից մեկ շաբաթ առաջ «Ազգ» օրաթերթի թղթակցին տված պատասխաններով: Մասնավորապես՝ պատասխանելով, թե արդյոք պաշտպանության նախարարությունում լինելո՞ւ են կադրային փոփոխություններ՝ Վ. Սարգսյանն ասում է. «*Ինչ որ փոփոխվելու էր, արդեն կատարվել է: Մնացել է, որ նախարարը փոխվի*» (Ասատրյան 2): Ինչ վերաբերում է իր հրաժարականի մասին հարցին, Վ. Սարգսյանը տալիս է երկիմաստ և հոռետեսական պատասխան, ինչը նույնպես վկայում է, որ թե՛ անձամբ իր, թե՛ տերպետրոսյանական էլիտայի համար առհասարակ այդ որոշումը հեշտ չի տրվել. «*… նախարարը կգնա այն պահին, երբ ունենա իրական, հստակ հաջողություններ: Այդ դեպքում տեղս կհանձնեմ պրոֆեսիոնալ մեկին,* ***չնայած համոզված չեմ, որ դա կբերի իրական փոփոխության*** (ընդգծումը մերն է – Է. Է.)» (Ասատրյան 2):

Պատերազմի կազմակերպման անհաջողությունների ֆոնին Լ. Տեր-Պետրոսյանն ի վերջո համաձայնում է Վ. Սարգսյանի պաշտոնանկությանը: Հոկտեմբերի 20-ին Լ. Տեր-Պետրոսյանն ստորագրում է հրամանագիր՝ վերջինիս ազատելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնից և նշանակելով նախագահի՝ պաշտպանության հարցերի գծով խորհրդական, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում նախագահի ներկայացուցիչ: Նույն օրը Լ. Տեր-Պետրոսյանի մեկ այլ հրամանագրով ՀՀ պաշտպանության նախարարի պարտականությունները դրվել են պաշտպանության հարցերը կոորդինացնող պետական նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանի վրա («Հայաստանի Հանրապետություն», 21.10.1992, 1):

Այսպիսով՝ ինչպես և Արցախում, Երևանում ևս հնարավոր դարձավ ներքաղաքական թևերի որոշակի միավորում, ուժերի համադրում՝ հանուն պատերազմական ջանքի (*war effort*): Երևանում տեղի ունեցած զարգացումը պետք է բացատրել ոչ թե որոշում կայացնողների անձնահոգեբանական կամ բարոյական հատկանիշներով, այլ զսպումների և հակակշիռների գործուն մեխանիզմի առկայությամբ: Վերջինս գործում էր այն բանի շնորհիվ, որ հասարակության մեջ, չնայած սոցիալ-տնտեսական աղետին, կար Ղարաբաղյան շարժման ազգային-ազատագրական արժեքների իներցիան, ինչպես նաև երկրում առկա էր գործունյա ընդդիմություն, որ, գործիքավորելով այդ իներցիան, կարողանում էր զսպել իշխանությունների միակողմանի ընթացքը և հեռացումը ազգային-ազատագրական օրակարգից: Այս առումով տեղին է առանձնացնել նաև Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը, ինչի մասին ուշագրավ գնահատական է պահպանվել ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության առաջին դեսպան Վլադիմիր Ստուպիշինի հուշերում. «*Դաշնակցականների … որոշ սկզբունքային դիրքորոշումներ, առաջին հերթին՝ ղարաբաղցիներին աջակցելը, այդ թվում՝ Արցախում ինքնապաշտպանական բանակ ստեղծելը, հրաժարումը պրոթուրքական քաղաքականությունից հօգուտ պրոռուսական քաղաքականության … 1992-1994 թթ.-ից իրապես դարձել էին կառավարության քաղաքականության գործուն տարրեր*» (Ступишин 138):

Ստեղծված իրավիճակում իշխող վերնախավը՝ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, փորձեց կայացնել որոշումներ, որոնք կերաշխավորեին շահավետ

ելք ցանկացած հնարավոր սցենարի դեպքում (*win-win situation*): Իշխանության ներսում տիրապետող համոզմունք էր դարձել, որ պատերազմը մոտ է տանուլ տրվելուն, և պետք է արտաքին և ներքին ասպարեզներում ինչ-որ կերպ հանգուցալուծում տալ դրան (Գրիգորյան 00:07:33-00:08:33; Էլբակյան, «Զրույց Ռոբերտ Մաթևոսյանի հետ»): Ներքին ճակատում այդ խնդիրը լուծվեց ընդդիմության ներկայացուցչին պաշտպանության նախարարի պաշտոնակատար նշանակելով: Խաղերի տեսության մեջ լայնորեն կիրառվող վճարային մատրիցայի պատկերագրությամբ կարող ենք ստանալ իշխանությունն ընդդիմության ներկայացուցչի հետ կիսելու հարցում իշխող էլիտայի պատկերացումներից բխող հետևյալ հաշվարկը՝

	հայոց հաղթանակ	հայոց պարտություն
էլիտայի հաղթանակ	*«Հաղթեցինք մենք. Վ. Մանուկյանն ընդամենը պաշտպանության նախարարի պաշտոնակատար էր»:*	*«Պատերազմում հաղթել առհասարակ հնարավոր չէր: Իսկ եթե հնարավոր էր, ուրեմն մեղավոր է հենց ընդդիմության ներկայացուցիչ Վ. Մանուկյանը»:*
էլիտայի պարտություն	—	—

Աղյուսակ 1. Տերպետրոսյանական էլիտայի՝ 1992 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների պաշտպանական որոշումների հիմքում ընկած ռացիոնալ մտայնությունը՝ ըստ խաղերի տեսության մեջ ընդունված վճարային մատրիցայի

Մեր վարկածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ, չնայած Վ. Մանուկյանի առաջարկին՝ պաշտպանության նախարար նշանակելու ոչ թե իրեն, այլ կադրային զինվորական, ԽՍՀՄ ցամաքային զորքերի շտաբի նախկին պետ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին, Լ. Տեր-Պետրոսյանի ընտրությունը կանգ է առնում հենց Վ. Մանուկյանի վրա (Գրիգորյան 00:05:27-00:06:02): Որպես հիմնավորում է բերվում այն հանգամանքը, որ կադրային զինվորական Ն. Տեր-Գրիգորյանցը նվազ պիտանելի է հայաստանյան տեղային պայմաններին, ի մասնավորի՝ կիսապարտիզանական, կիսաանկանոն պատերազմին: Մյուս կողմից՝ Ն. Տեր-Գրիգորյանցը քաղաքական կերպար չէր, ուստի՝ նրա նշանակման դեպքում իշխող ուժն էր շարունակելու քաղաքական պատասխանատվություն կրել: Այլ էր պարագան Վ. Մանուկյանի դեպքում, որ ընդդիմադիր քաղաքական պլատֆորմի ներկայացուցիչ էր, հանդես էր գալիս պատերազմի կազմակերպման քաղաքական ուղեգծի փոփոխության դիրքերից, այդ թվում՝ խորհրդարանի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու և ռազմական իրավիճակին հատուկ միջոցառումներ իրականացնելու հայտարարություններով (Ասատրյան 1): Իշխանության պատկերացումներով այսօրինակ քաղաքական կերպարը կարող էր ցանկացած պահի և ցանկացած ձևաչափով իրենց կողմից քաղաքական հաշվետվողականության դաշտ բերվել:

Երկրի քաղաքական կառուցակարգում առկա ստատուս-քվոն փոխելու Վ. Մանուկյանի առաջին իսկ փորձը հանդիպեց դիմադրության: Առաջին հերթին խոսքը ՀՀՇ-ական շրջանակների՝ ի դեմս Աշոտ Բլեյանի, Կտրիճ Սարդարյանի, Վալերի Միրզոյանի, Անահիտ Բայանդուրի՝ առերևույթ խաղաղասիրական, իրականում՝ կապիտուլյացիոն բնույթի քաղաքական քարոզչության մասին է: Հասկանալի է, որ, քաղաքական մարտահրավեր նետած լինելով «պատերազմում հնարավոր չէ հաղթել» ՀՀՇ-ական մոտեցմանը, Վ. Մանուկյանը պիտի հայտնվեր վերջիններիս գաղափարաքաղաքական թիրախավորման տակ: ՀՀՇ վարչության անդամ Ա. Բլեյանը, պատերազմական ջանքի համար իշխանության կենտրոնացման Վ.

Մանուկյանի առաջարկները հեգնելով, սեպտեմբերին գրում էր. «*… լրացուցիչ իշխանություն ու լիազորություններ են պահանջում խորհրդարանից. «Տվեք ինձ որքան հնարավոր է մեծ իշխանություն, ու ես չեմ բավարարվի դրանով ու կպահանջեմ ավելին, անսահմանափակը[»]: Որքա՞ն: Այնքան, որ բավարար լինի մեր նոր պետականության վերջնական կործանման համա՞ր*» (Բլեյան 5): Իսկ մեր պետականության «վերջնական կործանում» հեղինակն, ըստ էության, համարում էր ադրբեջանական ագրեսիան չեզոքացնելը: «*Անկախ Արցախ պետության, թե միացյալ Արցախ-Հայաստան պետության ստեղծումը երեկ ու այսօր մեր ուժերից վեր խնդիր էր, անժամանակ, որի իրագործումը պիտի քայքայեր ու քայքայեց հայոց նոր-նոր կայացող պետականությունը, քանդեր նոր-նոր ձևավորվող քաղաքացիական հասարակության հիմքերը… «Միացում», «պայքար, պայքար մինչև վերջ», «բացառիկ համաշխարհային ազգի առաքելության գիտակցում», «ազգափրկիչ տոտալ մոբիլիզացիա», «անկախ Արցախը հայոց հոգևոր վերածննդի լինելիության պարտադիր նախապայման»՝ ո՞վ իրավունք ունի ինձ, իմ սերնդին, իմ սաներին ու երեխաներին պարտադրել նման ընտրություն…*» (Բլեյան 5):

Արձագանքելով այս՝ ըստ էության ուղիղ քննադատությանը՝ հոկտեմբերի 29-ին Վ. Մանուկյանը պաշտպանության և ազգային բանակի ստեղծման հարցերով հանրապետական խորհրդակցության ժամանակ հայտարարեց. «*Հայ ժողովրդին անհրաժեշտ է խաղաղություն …, սակայն, եթե որևէ մեկը կարծում է, թե Հայաստանը զիջելով Ղարաբաղը՝ խաղաղություն ձեռք կբերի, նա խստագույնս սխալվում է… Հայաստանը կվերածվի թույլ պետության, որն անկարող կլինի ապահովել սեփական զարգացումը: Մեզ ուժ է անհրաժեշտ, և այդ ուժը ազգային բանակն է*» («Ազգ», 30.10.1992, 1): Ի պատասխան ընդդիմախոսների գաղափարախոսական քննադատության, որ փիլիսոփայական մակարդակում հանգում էր անհատապաշտության, քաղաքական մակարդակում՝ պետության կապիտուլյացիայի, Վ. Մանուկյանը՝ որպես պաշտպանության ոլորտի քաղաքական պատասխանատու, ձևակերպեց գործուն տեսլական՝ «*խաղաղության կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե հասնենք ինչ-որ հաղթանակների, և բանակի գաղափարախոսությունն է՝ հաղթանակի միջոցով հասնել խաղաղության: Հաղթանակ նշանակում է, որ այն տարածքը, որը բնակեցված էր հայերով՝ ամբողջությամբ Արցախը և Հայաստանը, պետք է նորից լինի հայերի ձեռքում, իսկ այնուհետև գուցե երկարատև պաշտպանության միջոցով ապացուցել, որ այն մեր ձեռքից խլել հնարավոր չէ*» (Արդության 2): Անդրադառնալով Ա. Բլեյանի հայացքներին՝ Վ. Մանուկյանը նշել էր, որ պատերազմող պետություններում սովորաբար պարտվողական տրամադրությունների համար պատասխանատվության են կանչում՝ ընդհուպ մինչև գնդակահարություն (Արդության 2):

Պետք է նշել, որ սա պատասխան էր ոչ միայն իշխանական առանձին ընդդիմախոսների խոսույթին, այլև, առաջին հերթին, թերևս նրանց քաղաքական ղեկավար Լ. Տեր-Պետրոսյանի հայացքներին, որ Հայաստանի անկախացումից և ԽՍՀՄ փլուզումից հետո ներքին շրջանակներում հայտարարում էր պատերազմի անհեռանկարայնության և բանակցային տարբերակով դրանից հրաժարվելու անհրաժեշտության մասին: «*Լևոն Տեր-Պետրոսյանն էլ [Գերագույն խորհրդի] փակ նիստի ժամանակ գրեթե բաց այդ միտքը ասեց: Խոսքը այն էր, որ բոլոր ռեսուրսներով, մարդկային ռեսուրսով Ադրբեջանը մեզանից ավելի ուժեղ էր: Սպառազինության տեսակետից: Ամբողջ զենքը, որ մենք ունեինք, … Խորհրդային Միությունից մնացած զենքն էր: Խորհրդային բանակը գնաց, զենքը թողեց մեզ: Մենք ստացանք մոտավորապես 500 վագոն զենք ու զինամթերք, Ադրբեջանը 10000 վագոն: Ուղղակի Ադրբեջանում կանգնած բանակը ավելի մեծ էր: Իրենք ունեին ինքնաթիռներ, մենք չունեինք ինքնաթիռներ, այսինքն՝ բազմաթիվ պարամետրներով Ադրբեջանը ուժեղ էր, և ռեալիստորեն մտածում էին* (իշխանությունները – Է. Է.), *որ,*

միևնույնն է, մենք չենք կարող հաղթել, գնանք, ինչ-որ պայմանավորվածություններով վերջացնենք այդ պատերազմը»,- այդ դեպքերից 13 տարի անց պատմել է Վ. Մանուկյանը (Գրիգորյան 00:07:33-00:08:33): Իսկ վերջին տարիներին գաղտնազերծված փաստաթղթերից իմանում ենք, որ դեռ 1992 թ. փետրվարի 12-ին, Երևանում ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ զրույցի ժամանակ Լ. Տեր-Պետրոսյանը ՀՀ անունից Լեռնային Ղարաբաղը համարել է Ադրբեջանի ներքին հարցը (Սարգսյան 204-205): Նույն հանդիպման ժամանակ Լ. Տեր-Պետրոսյանը ձևակերպել է Հայաստանի գոյության իր տեսակերպը. «*Հայ ազգի անկախության և գոյության միակ երաշխիքը խաղաղությունն է… Եվ այդ նպատակով Հայաստանը ձգտում է Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման… Այդ նպատակին հասնելու համար … Հայաստանը շատ առաջարկներ և փոխզիջումներ է արել*» (Սարգսյան 208): Տերպետրոսյանական և մանուկյանական հակադիր մոտեցումները կարելի է պայմանականորեն սահմանել որպես «չերաշխավորված խաղաղություն՝ առանց հաղթանակի» և «դեպի խաղաղություն՝ ուժի և հաղթանակի միջոցով»:

ՀՀ-ում և Արցախում այդ ժամանակաշրջանում ռազմաքաղաքական ղեկավարման համակարգի ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ է նշել, որ պարտվողական և կապիտուլյացիոն քարոզչության վնասակարությունը հասկանում էին նաև Ստեփանակերտում, և այսպես կոչված «բլեյանիզմի» դեմ հանդես եկավ նաև Արցախի պաշտպանության նախարարը՝ Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը. «*… Ձեր մի անզգույշ բառը, Բաքու կատարած ձեր մի ճանապարհորդությունը ոգևորում են գրեթե բարոյալքված թշնամուն և ողբերգություն բերում Արցախի և Հայաստանի սահմանամերձ շրջանների ձեր հազարավոր հայրենակիցներին: … Իմ խոսքերը առաջին հերթին վերաբերում են որոշ արմատական թերթերի և պարոն Բլեյանին, որն իր արհասիրտ վախկոտությամբ մեզ ավելի շատ վնաս բերեց, քան 3-4 ադրբեջանական գումարտակներ*» (Աղաջանյան 2):

Սա վկայում է, որ թե՛ Ստեփանակերտում, թե՛ Երևանում ձևավորվել էր քաղաքական համադրություն՝ պատերազմական ջանքի ռազմավարական ուղեգծի շուրջ: Արցախում դա պայմանավորված էր էլիտայի ձևավորման տեղային-տեղագրական առանձնահատկություններով, էլիտայի կողմից անմիջական գոյաբանական սպառնալիքի գիտակցմամբ, իսկ կառուցվածքային առումով՝ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծմամբ: Երևանում դա մեծապես պայմանավորված էր գաղափարական մակարդակում Ղարաբաղյան շարժման ազգային-ազատագրական արժեքների ինտերցիայի պահպանմամբ, իսկ էլիտայի մակարդակում՝ շարժման նահապետներից ինքնուրույն քաղաքական մտածողության կրողի և ռազմաքաղաքական կերպարի՝ Վ. Մանուկյանի պաշտոնավարման փաստով:

Կապանի ինքնապաշտպանական օպերացիայի պլանավորումը և իրականացումը

1992 թ.-ի աշնանը Կապանի հատվածում դրությունը շարունակում էր ծանր մնալ: Քաղաքն ապրում էր նկուղներում, սահմանային կրակոցներն ու ընդհարումներն ամենօրյա բնույթ ունեին: Առավել ծանր էր նոյեմբերի 5-6-ն ընկած ժամանակահատվածը: Ամսի 5-ի կեսօրին քաղաքը հրետակոծվեց թշնամու «ԲՄ-21 Գրադ» ՀԿՌԿ-ներից և կրակի տակ առնվեց Ղազանչիի և Սուսան սարի դիրքերից (ՀՀ, 06.11.1992, 1; ՀՀ, 07.11.1992, 1): Արդեն պարբերական էին դառնում նաև դիվերսիոն ներթափանցումները Կապանի օդանավակայանի և հենց քաղաքի տարածք: Պատերազմական կացության և փաստացի շրջափակման մեջ էր ամբողջ Ծավի ենթաշրջանը՝ Ներքին Հանդ-Ծավ-Շիկահող-Ճակատեն-Գեղանուշ բնագծով:

Պատերազմի պլանավորման ռազմավարական մակարդակում իրավիճակը փակուղային էր: Թշնամու 1992 թ. ամառ-աշնանային հարձակման հետևանքով ընկել էր ամբողջ Շահումյանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Արծվաշենը, Լաչինի միջանցքը հարվածի տակ էր երկու կողմից, թշնամուն հաջողվում էր կաշկանդել հայկական ուժերին ՀՀ սահմաններին՝ շեղելով արցախյան ռազմաճակատից: Այս պայմաններում առանձին տեղային հաջողությունները, ինչպես օրինակ՝ հոկտեմբերի 2-ին Արցախի Մարտունի քաղաքին հարակից Կուրոպատկինո, Ամիրանլար, Մուղանլու կրակակետերի լռեցումը կամ հոկտեմբերի 19-ին Լաչինի միջանցքում հայկական կողմի հրետանային հակահարձակումը, չէին լուծում ռազմավարական փակուղու հարցը: Մեծագույն խնդիրն այն էր, որ թշնամին պատերազմի հարցում չէր ինքնակաշկանդում սեփական գործողությունները, ազատորեն թիրախավորում էր նաև ՀՀ տարածքը՝ այդպիսով ռազմավարական նախաձեռնողականությունը, այդ թվում՝ հարվածի ուղղությունները որոշելու հարցը պահելով իր ձեռքում: Իսկ Հայաստանի իշխող վերնախավի շրջանում այդ ժամանակ տակավին տիրապետող էր այն մտայնությունը, որ Հայաստանը պատերազմի մեջ չէ Ադրբեջանի հետ, պարզապես օգնում է Արցախի պայքարին:

«*Ես դա* (այդ մտայնությունը – Է. Է.) *խախտեցի Ղափանի օպերացիայով: Որովհետև արդեն ծիծաղելի էր էդ խաղը անել, երբ որ պարզ երևում էր, որ մենք ու Ադրբեջանը իրար հետ կռվում ենք*» (Մանուկյան 01:04:25-01:07:22):

Այդ ժամանակ ՀՀ սահմանապահ զորքերի վարչության պետ Յու. Խաչատուրովի հիշողություններով՝ նոյեմբերի վերջին տասնօրյակին Վ. Մանուկյանը հրավիրում է իրեն՝ հայտնելով, որ ամբողջ ռազմաճակատում ծանր վիճակ է, և եթե արտառոց որևէ բան չձեռնարկվի, ավելի վատ կլինի: Լսելով Կապանում տիրող իրավիճակի մասին Յու. Խաչատուրովի զեկուցումը՝ Վ. Մանուկյանը խնդիր է դնում Կապանից առաջանալ Զանգելանի (ներկայումս՝ Կովսական, ԼՂՀ) ուղղությամբ: Նախքան այդ՝ Գ. Դալիբալթայանի և գեներալ-մայոր Հրաչ Անդրեասյանի հետ ունեցած առանձին զրույցների ժամանակ, Վ. Մանուկյանը վերջիններիս առաջ խնդիր էր դրել առաջանալու՝ համապատասխանաբար Շուռնուխ-Կուբաթլու (ներկայումս՝ Որոտան, ԼՂՀ) և Կարմրաքար-Կուբաթլու ուղղություններով (Դեմիրճյան 00:00:00-00:02:22): Գործողության մասնակիցների՝ տարբեր տարիներին թողած վկայությունների քննական համադրությունը, ինչպես նաև ռազմաճակատի այդ հատվածներում տիրող օպերատիվ դրության վերլուծությունը բերում են այն համոզման, որ հարվածի հիմնական ուղղությունը և օպերատիվ թիրախը հենց Կապան-Զանգելան ուղղությունն էր, իսկ Կուբաթլուի ուղղություններն ունենալու էին շեղող-կաշկանդող նշանակություն՝ թույլ չտալով թշնամու՝ Կուբաթլուում տեղակայված ստորաբաժանումներին օգնության հասնելու դեպի հարավ: «*Զանգելանի ուղղությունն ամենաանհրաժեշտն էր: Կարծում եմ՝ Շուռնուխն ու Կարմրաքարը շեղող հարվածներ էին: Վազգենը [Մանուկյան] երևի գիտակցաբար է այդպես խնդիրը դրել, որ ինչ-որ շեղող հարվածներ էլ լինեն: Որովհետև Զանգելանի ուղղությունն էր լուծում հարցը, որ կապանցիները դուրս գային նկուղներից, մյուս ուղղություններն այդ հարցը չէին լուծում*» (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»):

Ասվածի պարզ, բայց հիմնավոր ապացույց է նաև այն հանգամանքը, որ գործողության խնդիրը ձևակերպող Վ. Մանուկյանի խոսույթում այն կոչվում է «Ղափանի/Կապանի օպերացիա», և վկայություններում հիշատակվում է միայն բուն կապանյան գործողությունը: Շուռնուխի և Կարմրաքարի ուղղություններով հարձակումների մասին իմանում ենք Յու. Խաչատուրովի պատմածներից, գործողությանը մասնակցածների հուշերից, տվյալ ամսաթվին տվյալ տեղամասերում զոհված հայ ազատամարտիկների անվանացանկից, ինչպես նաև ադրբեջանական ռազմադաշտային տեղեկագրերից:

Օպերացիայի մարտական խնդիրները, ինչպես տեսանք, Վ. Մանուկյանը ձևակերպել է երեք հրամանատարների հետ առանձին-առանձին, որից հետո յուրաքանչյուրը կազմել է իր պլանը: Չնայած հետագայում Կապանի բրիգադի բանակային տեղեկագրերում (Մինասյան 11; Թադևոսյան 00:20:57-00:21:09) նշվել է, որ Կապանի գործողության պլանը կազմել է Հ. Անդրեասյանը՝ հակված ենք պնդելու, որ դա հետփաստյա հարմարեցում և ի հաշիվ փաստերի՝ պատումակերտում է, ինչն այդքան բնորոշ է պատերազմների հետպատերազմական պետական պատմագրությանը: Այս դեպքում դա կարող է պայմանավորված լինել ինչպես ներբանակային միջանձնային կապերով, այնպես էլ բանակային հիերարխիան գետնի վրա եղած իրականությանը «հարմարեցնելու» մոտեցմամբ (Հ. Անդրեասյանը գեներալ-մայոր էր, իսկ Յու. Խաչատուրովը՝ գնդապետ): Փոխարենը բուն խնդիրը դնող Վ. Մանուկյանը հիշում է. «*Ղափանի օպերացիայում շատ մեծ դերակատարում ունեցավ Յուրի Խաչատուրովը*» (Մանուկյան 01:04:25-01:07:22):

Ինչ վերաբերում է մարտական խնդրի մանրամասներին, ապա ըստ Յու. Խաչատուրովի հուշերի՝ օպերատիվ ուղղություն էր սահմանված Զանգելանը, «*իսկ այնտեղ արդեն, ոնց ստացվի, մարտական խնդիրը չէր պարտադրում, որ անպայման գնանք ու Զանգելանը վերցնենք*» (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»): Օպերացիային «Սիսական» գումարտակի շտաբի պետի պաշտոնում Շիկահող-Շայիֆլու (Գրհամ, ԼՂՀ) ուղղությամբ մասնակցած Ա. Մինասյանի հիշողություններով՝ բարձր նշանակության օպերատիվ թիրախ էր Ողջի գետի ափի նեղ տեղամասը: Այդ մասը հյուսիսից եզերում են Սուսան սարի լեռները, հարավից՝ Ասկյուլումի լեռները՝ ձևավորելով լեռնահովտային կապան, որից արևելք բացվում է ճանապարհը դեպի Զանգելանի դաշտ: Այդտեղ նախկին երկաթուղու երկաթգծի տեղամասը կահավորված էր թունելով: Վերջինս հայկական բնակավայրերը հրետակոծող թշնամու «ԲՄ-21 Գրադ» ՀԿՌԿ համար օգտագործվում էր որպես քողարկամիջոց և ապաստարան (Էլբակյան, «Հարցազրույց Աշոտ Մինասյանի հետ»): Գործողության հետապնդած նվազագույն խնդիր կամ, ինչպես ընդունված է ասել արևմտյան ռազմական հայեցակարգային բառապաշարում, վճռորոշ կետ է եղել 1168,4 մ նիշով Գեղալի (նախկին ԽՍՀՄ ԳԾ տեղագրական քարտեզներում՝ Կյագանլի) բարձունքը, որից հեշտությամբ տեսանելի և թիրախավորելի են Կապան քաղաքը և շրջակայքը, Գեղանուշ գյուղը: «*Կյագանլիից ամբողջ Կապանն ափիդ մեջ է… Սարը … «կախված է» քաղաքի վրա, և … այդ սարից, անտառների մեջ թաքնվելով, շատ հեշտ էր սպանել մեր մարդկանց անգամ սովորական ինքնաձիգից… Իրանք նստած էին, վերևից գռանատամյոտով կրակում էին, պուլիմյոտներով կրակում էին*»,- տարբեր տարիներին տված իր հարցազրույցներում վկայել է Յու. Խաչատուրովը (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»; Դեմիրճյան 00:00:00-00:02:22; Լազարյան 00:09:56-00:10:50):

Կապանում Յու. Խաչատուրովի գլխավորությամբ ձևավորվում է օպերատիվ շտաբ, որտեղ իրականացվում էին կազմակերպչական բոլոր աշխատանքները (Մինասյան 11): Օպերացիայի նախապատրաստումը տևել է շուրջ 15-17 օր: Այդ ընթացքում իրականացվում է օպերացիայի մանրամասն նախապատրաստություն՝ բոլոր տարրերի հաջորդական մշակմամբ, այն է՝ խնդիրը կատարողների, խնդրի կատարման եղանակների և ժամկետների որոշումը, անհրաժեշտ ուժերի և միջոցների առանձնացումը: Նախատեսվել են գործողություններ ինչպես օպերացիայի ձախողման դեպքում (ռեզերվներ և օժանդակ ուժեր), այնպես էլ իրադրության բարենպաստ զարգացման դեպքում հաջողությունը զարգացնելու մեխանիզմներ, այդ թվում՝ թշնամու պաշտպանության մեջ մխրճում և ճեղքման տեղամասում լրացուցիչ ստորաբաժանումներ մտցնել (Լազարյան 00:09:56-00:10:50): Առանձնակի կարևորություն էր տրված հետախուզական տվյալների հավաքագրմանը և հրետանու համար նշանակետերի ճշգրտմանը: Պատրաստությունները, այդ թվում՝

հետախուզությունը, իրականացվել էին խիստ գաղտնիության պայմաններում, ինչն օպերացիայի ընթացքում յուրային ուժերի համար ապահովեց անսպասելիության գործոն: Ըստ պլանի՝ յուրային ստորաբաժանումները պետք է հասնեին անվտանգ դիրքերի՝ Կապան-Շիկահող ավտոճանապարհի երկայնքով տեղակայված թշնամու չորս հենակետերի առջև: Դրանց ոչնչացումը նախատեսվում էր իրականացնել հրետանային նախապատրաստությունից հետո՝ ճակատային գրոհի միջոցով (Դեմիրճյան 00:04:37-00:05:25):

Նկար 1. Կապանի՝ 1992 թ. ապաշրջափակման ռազմագործողության սխեմատիկ քարտեզի վերակազմության հեղինակային փորձ

Մարտավարական այս նպատակի շրջանակներում օպերացիայի գլխավոր ուղղություն էր ընտրվել Գեղանուշ-Ճակատեն ուղղությունը, որտեղ գործում էր Կապանի գումարտակը: Սյունիք սովտնտեսությունից դեպի Ողջի գետի հովիտը ձևավորվեցին ևս երկու հարվածային ուղղություններ, որոնց նպատակը պետք է լիներ թշնամուն հետապնդելը և հիմնական ճակատի առաջխաղացմանն աջակցելը: Այդ ուղղությամբ ներգրավված էին «Սիսական» գումարտակի 3-րդ և 4-րդ վաշտերը (հրամանատարներ՝ Վուրգ Ոսկանյան և Մանվել Հովհաննիսյան): Թևային ստորաբաժանումների խնդիրն էր ապահովել կենտրոնական ուղղության հաջողությունը, իսկ հաջողության դեպքում՝ թևային գրոհներով թշնամու ուժերի շրջափակումը և Շայիֆլու տեղամասում հիմնական ուժերի հետ միանալը: Ձախ թևում՝ 1329 մ նիշով Գրվա կամ Փայլասար լեռան ուղղությամբ դեպի 1305,6 մ նիշով Սուսան սարի լեռնաշղթա, գործում էր շուրջ 70 հոգանոց ստորաբաժանում՝ կազմված Սիսիանի և Կապանի սահմանապահ պարետատների վաշտերից: Աջ թևում՝

Շիկահող-Շայիֆլու ուղղությամբ, տեղակայված էր «Սիսական» գումարտակի ռեզերվը: Գյումրիից բերված հրետանային ստորաբաժանումը ղեկավարում էր գնդապետ Միքայել Գրիգորյանը:

Գործողությունն սկսվում է լուսաբացին՝ ժ. 06:00-ին՝ դեկտեմբերյան մթության պայմաններում: Հետախուզական 4 խմբեր, դեռ նախքան հրետանային նախապատրաստությունը, նվազագույն թույլատրելի հեռավորության վրա մոտենում են թշնամու դիրքերին: Համոզվելով խնդրի կատարման հնարավորության մեջ՝ հրամանատարը հրամայում է պատրաստվել գրոհի: Հետախույզները համաժամանակյա նռնակային հարվածներ են հասցնում թշնամու դիրքերին՝ պատճառելով խուճապ և բարոյալքում: Այսպիսով՝ գրոհն սկսում է անգամ առանց հիմնական հետևակային ուժերի, որոնք հետախույզներից հետո սկսում են մոտենալ մարտադաշտին: Առաջնագծի գրավումից հետո հայկական ուժերն զբաղեցնում են Գեղանուշից արևելք գտնվող և կրակակետի վերածված Ղազանչի գյուղի հանդեպ գերիշխող դիրք ունեցող 1133,7 մ նիշով անանուն բարձունքը: Ժ. 08:00-12:00 հատվածում հարձակման հաջորդ թիրախ է դառնում հենց Ղազանչին, որի դպրոցի շենքում կենտրոնացած էին թշնամու երկու գումարտակներ, որ մինչ այդ վերահսկում էին շրջակայքի ողջ անտառային զանգվածը և Կապանից հարավ անցնող գագաթները: Հայկական կողմի գնդակների տարափի տակ վերջիններս երկուական մարդով դուրս են թռչում դպրոցի շենքից և փախչում դեպի անտառ: Ժ. 12:00-13:00 հատվածում հայկական ուժերը վերահսկողություն են հաստատում Գեղալի բարձունքի հանդեպ՝ շարունակելով հարձակումը դեպի հարավ՝ Ջանբար, Շայիֆլու: Առաջապահ ստորաբաժանումները Ջանգելանից 6-7 կմ հեռավորության վրա՝ Յու. Խաչատուրովը որոշում է կայացնում՝ դադարեցնել առաջխաղացումը՝ խուսափելու համար ճակատի անհամաչափ լայնացումից և հաշվի առնելով կենդանի ուժի քչությունը:

Մինչ այդ՝ ըստ նախնական պլանի և հրամանի՝ առաջացել էին նաև թևերը՝ Կապանի և Սիսիանի սահմանապահները ձախից և 14 հոգի «Սիսական» գումարտակից՝ աջից: Վերջին խումբը, հասնելով Շայիֆլու, հայտնվում է դարանի մեջ, զոհվում է գնդացրորդ Արշակ Գրիգորյանը, վիրավորվում շտաբի պետ Աշոտ Մինասյանը: Պատճառը հետևակի և զրահատեխնիկայի (1 տանկ, 1 ՀՄՄ) չհամադրված գործողություններն էին, ինչպես նաև հետախուզական տվյալների պակասը: Հաշվի առնելով մութը և ցածր տեսանելիությունը, կորցրած լինելով կապը հիմնական ուժերի հետ՝ Ա. Մինասյանը հրամայում է նահանջել դեպի Ճակատենի կաթնապրանքային ֆերմա՝ խուսափելու համար շրջափակումից (Էլբակյան, «Հարցազրույց Աշոտ Մինասյանի հետ»):

Միաժամանակ Փայլասարի ժայռերին գործող սահմանապահները ոչնչացնում են թշնամական մեկ դիրք և ըստ նախնական պլանի՝ պատրաստվում են առաջանալ դեպի Շայիֆլու: Ռադիոկայանը բախվում է ժայռերին և փչանում, ինչի պատճառով կորչում է կապը հրամանատար Յու. Խաչատուրովի հետ, որ չի հասցնում Շայիֆլուի վրա գրոհը դադարեցնելու հրաման տալ: Չիմանալով օպերատիվ դրության փոփոխության մասին՝ սահմանապահները շարժվում են դեպի Շայիֆլու՝ չնախատեսված մարտի մեջ մտնելով Ղազանչիից փախչող թշնամական ուժերի հետ: Իր հետ միասին թշնամու չորս զինծառայողի պայթեցնելով՝ քաջաբար զոհվում է Մկրտիչ Մակարյանը, յուրային զորքերի անվտանգ նահանջը ապահովելով՝ լեյտենանտ Արմեն Հայրապետյանը («Միկրոբ») (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»; Էլբակյան, «Հարցազրույց Աշոտ Մինասյանի հետ»):

Այդ օրը Շայիֆլուում են զոհվում նաև Խաչատուր Դավթյանը, Վիկտոր Սարգսյանը, Թահիր Բադալյանը: Տրիդցատկայում (Օթուզունջու) զոհվում են Օլեգ Խալափյանը և Ստանիսլավ Գայամյանը: Կապանում թշնամու հրետակոծությունից զոհվում են ազատամարտիկներ Արշակ Աբգարյանը, Գառնիկ Սահակյանը, Յուրի Առաքելյանը և Արսեն Մարտիրոսյանը (Վարդանյան 54-65; ՂԱՊ 702-862):

Չնայած կրած կորուստներին և Շայիֆլուից նահանջելուն՝ հայկական ուժերն ազատագրում են կրակակետի վերածված շուրջ 9 գյուղ՝ 140 կմ^2-ի հասնող տարածքով: Կապանի ինքնապաշտպանական օպերացիան կարող է դասակարգվել որպես սահմանափակ մասշտաբով (իրականացվել է գնդի կազմով), բայց ռազմավարական իմաստավորվածությամբ հարձակում, որի նպատակն էր հոգեբանական և օպերատիվ ճեղքման հասնել՝ դրանով իսկ կասեցնելով թշնամու հարձակողական թափը: Չնայած իր սահմանափակ աշխարհագրական ընդգրկմանը՝ օպերացիայի հղացումը համապատասխանում էր ռազմավարական հետևանքների բերող մարտավարական մանևրի ավելի մեծ տրամաբանությանը, որ բնորոշ է առհասարակ բոլոր բեկումնային գործողություններին:

Օպերացիայի շնորհիվ ապաշրջափակվում են Կապան քաղաքը, Ծավի ենթաշրջանի գյուղերը և առհասարակ՝ Հայաստանի հարավը: Ըստ այսմ՝ Կապանի ինքնապաշտպանական օպերացիան կարելի է կոչել նաև Կապանի ապաշրջափակման օպերացիա: Չնայած Զանգելանի շրջանում արտակարգ դրություն հայտարարելուն («Ազգ», 18.12.1992, 1), ջախջախված զորքի և ներքին զորքերի կազմակերպումը գեներալ-մայոր Դադաշ Ռզաևին հանձնարարելուն (Էլբակյան, «Պատերազմի շատ կարևոր մի էջը», 3)՝ Ադրբեջանին չհաջողվեց վերագրավել նշված գյուղերը: Անհաջողության մատնվեց նաև դեկտեմբերի 24-ին Կապանի Ագարակ և Եղվարդ գյուղերի դեմ թևային հարձակումը («Ազգ», 25.12.1992, 1):



ՍԱՀՄԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից հաղորդեցին, որ երեկ, դեկտեմբերի 25-ին, Հայաստանի սահմաններում իրադրությունը հանգիստ է եղել: Ադրբեջանական կազմավորումները Կապանում կրած ջախջախիչ պարտությունից հետո նոր ոտնձգությունների չեն դիմել:

Նկար 2. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 26 դեկտեմբեր 1992թ. , էջ 1

Քննարկում

Կապանի օպերացիան իրականացվել էր Վ. Մանուկյանի նախաձեռնությամբ՝ առանց այդ մասին տեղյակ պահելու Լ. Տեր-Պետրոսյանին: «*Ղափանի օպերացիան համաձայնացված չէր, և դրա համար հետո փակ նիստ եղավ Գերագույն խորհրդում: … Իմ վրա ինչ կուժ-կուլա ասես թափեցին, որ առանց համաձայնեցնելու այդպիսի օպերացիա է կատարվում*»,- հետագայում պատմել է Վ. Մանուկյանը (Գրիգորյան 00:10:13-00:10:26): Տարաձայնություն կար ոչ միայն միկրոմակարդակում՝ առանձին վերցրած այդ գործողության վերաբերյալ, այլ, ինչպես ցույց տվեցինք մեր շարադրանքի ընթացքում, առհասարակ հաղթանակի և պարտության սահմանումների, նորանկախ պետության իմաստաբանության հարցերում: Կապանի օպերացիայի օրերին՝ դեկտեմբերի 11-14-ին, Ստոկհոլմում կայացել էր ԵԱՀԽ արտգործնախարարների համաժողով, որին նախորդել էր ԵԱՀԽ Մինսկի խմբի մասնակից պետությունների նիստ: Վերջինս կոչված էր ԵԱՀԽ որոշման նախագիծ ընդունելու, որով տեսականորեն կարող էր զինադադար հաստատվել և հակամարտության գոտում տեղակայվեին միջազգային դիտորդներ («Հայաստանի Հանրապետություն», 23.12.1992, 2): Չնայած Լ. Տեր-Պետրոսյանը Վ. Մանուկյանին

տեղյակ չէր պահել այս բանակցությունների մասին, ինչպես պնդում է ինքը՝ Մանուկյանը (Մանուկյան 01:04:25-01:07:22), այնուամենայնիվ, վերջինս տեղյակ էր դրա մասին: Բանակցությունների նախօրյակին՝ դեկտեմբերի 8-ին՝ ժ. 13:30-ին, ադրբեջանական երկու ռազմական ինքնաթիռներ խախտում են այն ժամանակվա հայ-ադրբեջանական դե-ֆակտո սահմանը, ներխուժում Վարդենիսի տարածք՝ ռմբակոծելով մեր բնակավայրերը՝ 11 հրթիռ արձակելով Մեծ Մասրիկի ուղղությամբ, 40 ռումբ՝ Կուտականի, 6 ռումբ՝ Տրետուքի (ՀՀ, 09.12.1992, 3): Վ. Մանուկյանի համար պարզ է դառնում, որ բանակցությունները «ծխաքողարկում» են ռազմական գործողությունների համար, և վերջնական հրաման է տալիս՝ սկսելու Կապանի օպերացիան:

Եզրակացություն

Սույն հոդվածի արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ Կապանի օպերացիան, ի շարս արդեն իսկ նշված օպերացիոն նվաճումների, **ռազմավարական մակարդակում** լուծեց նախաձեռնողականությունը, այդ թվում՝ հարվածի աշխարհագրությունը և ուղղությունը որոշելու մենաշնորհը թշնամուց խլելու խնդիրը: **Մարտավարական մակարդակում** դա լուծեց նաև բանակի ներսում բարոյահոգեբանական վիճակի բարելավման և սեփական ուժերի հանդեպ հավատի վերականգնման հարցերը: **Պատերազմի քաղաքական պլանավորման մակարդակում** այն ապացուցեց պատերազմական ջանքի և «խաղաղություն բանակի հաղթանակի միջոցով» ռազմավարական մոտեցումների ճշմարտացիությունն ու արդյունավետությունը՝ ընդդեմ կապիտուլյացիոն գաղափարախոսության:

«*Իմ խորին համոզմունքն է, որ եթե այդ ժամանակ Վազգեն Մանուկյանը չկայացներ այդ համարձակ որոշումը, չլիներ այդ օպերացիայի հաջողությունը, չէին լինի ո՛չ Քյալբաջարը, … ո՛չ Աղդամը, ո՛չ Ջաբրայիլը, ո՛չ Զանգելանը: Կապանի օպերացիայից հետո ամեն ինչ սկսվեց հօգուտ մեզ փոխվել*»,- տողերիս հեղինակի հետ հարցազրույցում փաստել է Յու. Խաչատուրովը (Էլբակյան, «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ»):

Խոսք երախտիքի

Սույն հոդվածի շրջանակներում ինձ հարցազրույցի ժամանակ տրամադրելու համար առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Վազգեն Մանուկյանին, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովին, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանին, գնդապետ Աշոտ Մինասյանին:

Հոդվածի հեղինակման ընթացքում ինձ ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն եմ հայտնում իմ գիտական ղեկավար՝ պ. գ. դ. , պրոֆեսոր Էդիկ Մինասյանին, տիկնոջս՝ բ. գ. թ. Մարիամ Մելքոնյանին, գործընկերներիս՝ «Հայկական նախագիծ» գիտակրթական հասարակական կազմակերպության աշխատակազմի անդամներ Սիրանուշ Ասատրյանին, Լաուրա Ավագյանին, նույն կազմակերպության լավ բարեկամ Էլեոնորա Սարգսյանին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաջանյան, Վահրամ. «Արցախի պաշտպանությունը համազգային խնդիր է». *«Ազգ»*, թիւ 145 (237), 10 դեկտեմբեր 1992:
2. Այվազյան, Հովհաննես. *Հաղթանակած բանակի գեներալը (վավերագրական արձակ)*. «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», Երևան, 2001:

3. Առաքելյան, Սերժ. «Ամենազորեղը նժդեհացած ոգին է». *«Ավանգարդ»*, թիվ 94 (14325), 21 դեկտեմբեր 2011:

4. Ասատրյան, Հակոբ. «Պետնախարար Վազգեն Մանուկյանը պաշտպանության նախարար». *«Ազգ»*, թիւ 113 (205), 21 հոկտեմբեր 1992:

5. Արողության, Արամ. «Վազգեն Մանուկյան. Խաղաղություն հաղթանակի միջոցով». *«Ազգ»*, թիւ 139 (231), 1 դեկտեմբեր 1992:

6. Բլեյան, Աշոտ. «Այլախոհության պահն է անց, խորհելու եմ կոչում». *«Ազգ»*, թիւ 114 (206), 22 հոկտեմբեր 1992:

7. ---. «Երբ շատ է դժվար, դիր փափախդ առաջդ ու խորհիր». *«Ազգ»*, թիւ 128 (220), 14 նոյեմբեր 1992:

8. Գրիգորյան, Արթուր. «Վազգեն Մանուկյան. «Զրույցներ պատերազմի մասին»». *YouTube*, վերբեռնվել է Maestro ալիքում, 4 փետրվար 2023, https://www.youtube.com/watch?v=dv6x8pYtV18: Մուտք՝ 26.08.2025:

9. Դեմիրճյան, Հրաչյա. «Յուրի Խաչատուրովը՝ Կապանի օպերացիայի մասին». *YouTube*, վերբեռնվել է Akada Pro Media ալիքում, 12 դեկտեմբեր 2019, https://www.youtube.com/watch?v=1upYnFnkugo: Մուտք՝ 26.08.2025:

10. Էլբակյան, Էդգար. «Արցախյան առաջին հաղթական պատերազմի տարիներին հայկական զինված ուժերի կորուստների վերլուծություն» (անտիպ). *հեղինակի անձնական արխիվ*, 2024:

11. ---. «Զրույց Բորիս Առուշանյանի հետ». *հեղինակի անձնական արխիվ*, 29 մայիս 2025:

12. ---. «Զրույց Մուրազ Սարգսյանի հետ». *հեղինակի անձնական արխիվ*, 6 հունիս 2025:

13. ---. «Զրույց Յուրի Խաչատուրովի հետ». *հեղինակի անձնական վիդեոարխիվ*, 28 հուլիս 2022:

14. ---. «Հարցազրույց Աշոտ Մինասյանի հետ». *հեղինակի անձնական արխիվ*, 6 հունիս 2025:

15. ---. «Հարցազրույց Յուրի Խաչատուրովի հետ». *հեղինակի անձնական աուդիոարխիվ*, 12 դեկտեմբեր 2019:

16. ---. «Հարցազրույց Ռոբերտ Մաթևոսյանի հետ». *հեղինակի անձնական արխիվ*, 23 դեկտեմբեր 2018:

17. ---. «Պատերազմի շատ կարևոր մի էջը. Կապանի օպերացիայի 22 տարին». *«Հայաստանի Հանրապետություն»*, թիվ 225 (6034), 11 դեկտեմբեր 2014:

18. ---. «Պատմության առջև» փաստավավերագրական ֆիլմ. *YouTube*, վերբեռնվել է 5 TV Channel ալիքում, 2 սեպտեմբեր 2020, https://www.youtube.com/watch?v=TYXaUHgbrTY: Մուտք՝ 26.08.2025:

19. Թադևոսյան, Սամվել. «Կապանի արդարության մարտիկները». *YouTube*, վերբեռնվել է Samvel Armenian ալիքում, 24 մայիս 2013, https://www.youtube.com/watch?v=1YNQwvCfmbo: Մուտք՝ 26.08.2025:

20. Լազարյան, Էլլա. «Սուր անկյուն. հատուկ դեպքեր». *հեղինակի անձնական վիդեոարխիվ*, 2014:

21. Խուրշուդյան, Ժորա և Հրաչ Զոհրաբյան. *Սիսականի արծիվներ*. «ԵԳԵԱ», Երևան, 2001:

22. Հակոբյան, Թաթուլ. *Կանաչ ու սև. արցախյան օրագիր*. հեղինակային հրատարակություն, Երևան-Ստեփանակերտ, 2008:

23. ՀՀ Գերագույն խորհուրդ. *«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին»* ԳԽ որոշում. 8 հուլիսի 1992. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278: Մուտք՝ 26.08.2025:

24. *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994*. 1 հատորով, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, Երևան, 2004:

25. Մանուկյան, Վազգեն. «Վազգեն Մանուկյանը հանդիպել է Հայկական համալսարանի ուսանողների ու շրջանավարտների հետ». *Facebook*, վերբեռնվել է Վազգեն Մանուկյան էջում, 29 մայիս 2025, https://www.facebook.com/manukyanvazgen/videos/1219831669164914/: Մուտք՝ 26.08.2025:

26. Մինասյան, Նորայր. «Կապանի բրիգադի մարտական ուղին (զորամասի ստեղծման 20-ամյակի առթիվ)». *«Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ*, թիվ 2 (969), 17-23 հունվարի 2013:

27. Սարգսյան, Սուրեն. *Հայաստանն ու Բուշն անձամբ: [1988-1992] Հայ-ամերիկյան շփումների գաղտնազերծված մանրամասներ*. Newmag, Երևան, 2022:

28. Սարգսյան, Վազգեն. «Հեռուստաուղերձ». *հեղինակի անձնական վիդեոարխիվ*, 15 օգոստոս 1992:

29. Վարդանյան, Արտեմ. *Գիրք անմահաց (մասն առաջին)*. «Առերեսում»-ԱՆԻ հրատարակչական համալիր, Երևան, 1994:

30. Օհանյան, Սեյրան. *Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագիծ)*. «Լիմուշ», Երևան, 2013:

31. *«Ազգ»*, թիւ 114 (206), 22 հոկտեմբեր 1992:

32. *«Ազգ»*, թիւ 120 (212), 30 հոկտեմբեր 1992:

33. *«Ազգ»*, թիւ 122 (214), 3 նոյեմբեր 1992:

34. *«Ազգ»*, թիւ 130 (222), 18 նոյեմբեր 1992:

35. *«Ազգ»*, թիւ 151 (243), 18 դեկտեմբեր 1992:

36. *«Ազգ»*, թիւ 155 (247), 25 դեկտեմբեր 1992:

37. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 180 (525), 12 սեպտեմբեր 1992:

38. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 208 (553), 21 հոկտեմբեր 1992:

39. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 220 (565), 6 նոյեմբեր 1992:

40. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 221 (566), 7 նոյեմբեր 1992:

41. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 242 (587), 9 դեկտեմբեր 1992:

42. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 252 (597), 23 դեկտեմբեր 1992:

43. *«Հայաստանի Հանրապետություն»*, թիւ 255 (600), 26 դեկտեմբեր 1992:

44. Ступишин, Владимир. *Моя миссия в Армению 1992-1994, Воспоминания первого посла России*. Academia, Москва, 2001.

WORKS CITED

1. Aghajanyan, Vahram. «Arcʻaxi pashtpanutʻyunə hamazgayin khndir ē» [The Defense of Artsakh is a Nationwide Issue]. Azg, t'iv 145 (237), 10 December 1992. (in Armenian)

2. Ayvazyan, Hovhannes. Hałtʻanakac banaki generalə (vaveragrakan ardzak) [The General of the Victorious Army (Documentary Prose)]. Haykakan hanragitʻarani glkhavor xmbagrutʻyuṇ, Yerewan, 2001. (in Armenian)

3. Arakelyan, Serž. «Amenazorełə nždehacac vogin ē» [The Most Powerful is the Spirit Embodied in Nzhdeh]. Avangard, t'iv 94 (14325), 21 December 2011. (in Armenian)

4. Asatryan, Hakob. «Petnaxarar Vazgen Manukʻyanə pashtpanutʻyan naxarar» [State Minister Vazgen Manukyan as Minister of Defense]. Azg, t'iv 113 (205), 21 October 1992. (in Armenian)

5. Arłutʻyan, Aram. «Vazgen Manukʻyan. Xałałutʻyun hałtʻanakʻi mijocov» [Vazgen Manukyan: Peace Through Victory]. Azg, t'iv 139 (231), 1 December 1992. (in Armenian)

6. Bleyan, Ašot. «Aylaxutʻyan pahn ē anc, xorhelu em kočum» [The Time for Dissent Has Passed, I Call for Reflection]. Azg, tʼiv 114 (206), 22 October 1992. (in Armenian)

7. ---. «Erb šat ē džvar, dir pʻapʻaxd ařajd u xorhir» [When It's Too Hard, Put Your Papakh in Front of You and Reflect]. Azg, tʼiv 128 (220), 14 November 1992. (in Armenian)

8. Grigoryan, Artʻur. «Vazgen Manukʻyan. 'Zruycʻner paterazmi masin'» [Vazgen Manukyan: 'Conversations about the War']. YouTube, uploaded by Maestro, 4 February 2023, https://www.youtube.com/watch?v=dv6x8pYtV18: Accessed: 26.08.2025: (in Armenian)

9. Demiřčʻyan, Hračʻya. «Yuri Xačʻaturovə – Kapani operaciayi masin» [Yuri Khachaturov about the Kapan Operation]. YouTube, uploaded by Akada Pro Media, 12 December 2019, https://www.youtube.com/watch?v=1upYnFnkugo: Accessed: 26.08.2025: (in Armenian)

10. Elbakyan, Edgar. «Arcʻaxyan ařajin hałtʻakan paterazmi tarinerin haykakan zinvac užeři korustʻneri verłutʻyun» (antip) [Analysis of the Losses of the Armenian Armed Forces During the First Victorious Artsakh War] (unpublished). Author's personal archive, 2024. (in Armenian)

11. ---. «Zruycʻ Boris Arušanyani het» [Conversation with Boris Arushanyan]. Author's personal archive, 29 May 2025. (in Armenian)

12. ---. «Zruycʻ Muraz Sargsyani het» [Conversation with Muraz Sargsyan]. Author's personal archive, 6 June 2025. (in Armenian)

13. ---. «Zruycʻ Yuri Xačʿaturovi het» [Conversation with Yuri Khachaturov]. Author's personal video archive, 28 July 2022. (in Armenian)

14. ---. «Hartsazruycʻ Ašot Minasyani het» [Interview with Ashot Minasyan]. Author's personal archive, 6 June 2025. (in Armenian)

15. ---. «Hartsazruycʻ Yuri Xačʿaturovi het» [Interview with Yuri Khachaturov]. Author's personal audio archive, 12 December 2019. (in Armenian)

16. ---. «Hartsazruycʻ Robert Matevosiani het» [Interview with Robert Matevosyan]. Author's personal archive, 23 December 2018. (in Armenian)

17. ---. «Paterazmi šat karevor mi ēĵy. Kapani operacʻiayi 22 tarin» [A Very Important Page of the War: 22 Years Since the Kapan Operation]. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 225 (6034), 11 December 2014. (in Armenian)

18. ---. «Patmutʿyan ařjev» pastavaveragrakan film [Facing History: A Documentary Film]. YouTube, uploaded by 5 TV Channel, 2 September 2020, https://www.youtube.com/watch?v=TYXaUHgbrTY: Accessed: 26.08.2025: (in Armenian)

19. Tʿadevosyan, Samvel. «Kapani ardarutʿyan martiknery» [Kapan's Justice Warriors]. YouTube, uploaded by Samvel Armenian, 24 May 2013, https://www.youtube.com/watch?v=1YNQwvCfmbo: Accessed: 26.08.2025: (in Armenian)

20. Lazaryan, Ella. «Sur ankʿyun. hatuk depkʿer» [Sharp Angle: Special Cases]. Author's personal video archive, 2014. (in Armenian)

21. Xuršudyan, Žora ew Hrač Zurabrhan. Sisakani arciwner [Eagles of Sisakan]. YGEA, Erewan, 2001. (in Armenian)

22. Hakobyan, Ṭatul. [Kaṇach u sev: Artsʼakhyan oragir / Green and Black: An Artsakh Diary.] Hełinakayin hratarakuṭʼyun, Erevan-Stepanakert, 2008. (in Armenian)

23. Hayastani Hanrapetutʿyan Geragoyn khorhurd. ['Lernayin Łarabaghi Hanrapetutʿyan mej steghtsʿvats iravichaki masin GKH voroshum [On the Situation in the Republic of Nagorno-Karabakh' Supreme Council Decision.] 8 July 1992. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278: Accessed: 26.08.2025: (in Armenian)

24. Łarabałyan azatagrakan paterazm: 1988–1994 [The Karabakh Liberation War: 1988–1994] 1 hatōrov, Haykakan hanragitaran hratarakčʿutʿyun, Erevan, 2004. (in Armenian)

25. Manukyan, Vazgen. [Vazgen Manukyanĕ handipel ē Haykakan hamalsarani usanołneri u shrjanawartneri het [Vazgen Manukyan met with students and graduates of the Armenian University] Facebook, uploaded by Vazgen Manukyan, 29 May 2025, https://www.facebook.com/manukyanvazgen/videos/1219831669164914/: Accessed: 26.08.2025: (in Armenian)

26. Minasyan, Norayr. [Kapani brigadi martakan ułin (zoramasi steghtsʿman 20-amyaki artʿiv) [The Combat Path of the Kapan Brigade (on the 20th Anniversary of the Unit's Establishment)] 'Hay zinwor' HH PNʿ pashtonatertʿ, tʿiv 2 (969), 17–23 January 2013. (in Armenian)

27. Sargsyan, Suren. Hayastanĕ u Bushn andznamb: 1988–1992 Hay-Amerikyan shʿpumneri gaghtnazerʿvats manramasner [Armenia and Bush Himself: 1988–1992 Declassified Details of Armenian-American Contacts] Newmag, Erewan, 2022. (in Armenian)

28. Sargsyan, Vazgen. Herustawugherts'[Television Address] Hēłinaki andznakan videōarkʿiv, 15 August 1992. (in Armenian)

29. Vardanyan, Artem. Girkʿ anmahatsʿ (masn ařajin) [Book of the Immortal (Part One)] 'Areresum'-ANI hratarakčʿakan hamalir, Erevan, 1994. (in Armenian)

30. Ohanyan, Seyran. Haykakan banaki 20-amyay taregrutʿyune (hamarrotʿ urvagitʿ) [20-Year Chronicle of the Armenian Army (Brief Overview)] 'Limush', Erewan, 2013. (in Armenian)

31. Azg, t'iv 114 (206), 22 hoktʿember 1992. [Azg, no. 114 (206), 22 October 1992.] (in Armenian).

32. Azg, t'iv 120 (212), 30 hoktʿember 1992. [Azg, no. 120 (212), 30 October 1992.] (in Armenian).

33. Azg, t'iv 122 (214), 3 noyember 1992. [Azg, no. 122 (214), 3 November 1992.] (in Armenian).

34. Azg, t'iv 130 (222), 18 noyember 1992. [Azg, no. 130 (222), 18 November 1992.] (in Armenian).

35. Azg, t'iv 151 (243), 18 dektember 1992. [Azg, no. 151 (243), 18 December 1992.] (in Armenian).

36. Azg, t'iv 155 (247), 25 dektember 1992. [Azg, no. 155 (247), 25 December 1992.] (in Armenian).

37. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 180 (525), 12 septʿember 1992. [Republic of Armenia, no. 180 (525), 12 September 1992.] (in Armenian).

38. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 208 (553), 21 hoktʿember 1992. [Republic of Armenia, no. 208 (553), 21 October 1992.] (in Armenian).

39. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 220 (565), 6 noyember 1992. [Republic of Armenia, no. 220 (565), 6 November 1992.] (in Armenian).

40. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 221 (566), 7 noyember 1992. [Republic of Armenia, no. 221 (566), 7 November 1992.] (in Armenian).

41. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 242 (587), 9 dektember 1992. [Republic of Armenia, no. 242 (587), 9 December 1992.] (in Armenian).

42. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 252 (597), 23 dektember 1992. [Republic of Armenia, no. 252 (597), 23 December 1992.] (in Armenian).

43. Hayastani Hanrapetutʿyun, tʿiv 255 (600), 26 dektember 1992. [Republic of Armenia, no. 255 (600), 26 December 1992.] (in Armenian).

44. Stupišin, Vladimir. *Moja missija v Armeniju 1992-1994, Vospominanija pervogo posla Rossii*. Academia, Moskva [My Mission to Armenia, 1992–1994: Memoirs of Russia's First Ambassador, Moscow,] 2001. (in Russian)

EXAMINING THE EMERGENCE OF A POLITICO-MILITARY GOVERNANCE SYSTEM IN ARMENIA: A CASE STUDY OF THE KAPAN SELF-DEFENSE OPERATION (DECEMBER 1992)

EDGAR ELBAKYAN
Yerevan State University, Faculty of History
Chair of the History of Armenia, Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia

The object of this research is the Armenian politico-military governance system during the Armenian-Azerbaijani armed conflict, while the subject is the specific features of its formation and manifestation as seen in the example of the Kapan self-defense operation. The aim of the research, pursued through the method of qualitative content analysis, is to reveal the particularities of the formation of Armenia's politico-military governance system using this operation as a turning point.

The relevance of this article is determined by two main factors. First, it contributes to the academic field devoted to the study of the Armenian-Azerbaijani armed conflict by focusing on a specific historical episode that has not yet received coverage in scholarly literature. Second, the article has practical significance in terms of the reproducibility of the "social technology" of forming and operating systems of politico-military governance under crisis conditions. The article's relevance is further underscored by the fact that both during the period under study (1992) and at the time of writing, the de facto frontline between Armenia and Azerbaijan in the Kapan region and the eastern part of Syunik remains identical in configuration, lending additional politico-military significance to the topic.

The scholarly novelty of the article lies in the fact that the Kapan self-defense operation is for the first time made the subject of a standalone academic study and is examined not in isolation, but in the broader politico-military context of the corresponding phase of the war.

Among the key conclusions is the finding that the Kapan operation marked a turning point not only at the operational level in this segment of the front but also in the overall political-strategic paradigm of war organization, seizing the initiative and the monopoly of determining the geography of offensive actions from the Azerbaijani side.

Keywords: *Kapan self-defense operation, Armenian-Azerbaijani armed conflict, Kapan, Vazgen Manukyan, Yuri Khachaturov, politico-military governance, Kapan deblockade.*

О ФОРМИРОВАНИИ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ НА ПРИМЕРЕ КАПАНСКОЙ САМООБОРОНИТЕЛЬНОЙ ОПЕРАЦИИ (ДЕКАБРЬ 1992 Г.)

ЭДГАР ЭЛБАКЯН
соискатель кафедры истории Армении факультета истории Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Объектом настоящего исследования является система армянского военно-политического управления в период армяно-азербайджанского вооружённого конфликта, предметом – особенности формирования и проявления этой системы на примере Капанской оборонительной операции. Цель исследования, достижение которой предполагается с помощью метода качественного содержательного анализа, заключается в выявлении особенностей формирования системы военно-политического управления в Армении на примере данной операции как поворотного эпизода войны.

Актуальность настоящей статьи обусловлена двумя основными факторами. Во-первых, она вносит вклад в развитие научного поля, посвящённого изучению армяно-азербайджанского вооружённого конфликта, поставив в центр внимания конкретный исторический эпизод, до сих пор не получивший освещения в академической литературе. Во-вторых, статья имеет прикладное значение с точки зрения воспроизводимости «социальной технологии» формирования и функционирования систем военно-политического управления в условиях кризиса. Актуальность статьи подчёркивается и тем, что как и в исследуемый период (1992 г.), так и на момент написания статьи, де-факто линия фронта между Арменией и Азербайджаном в районе Капана и в восточной части Сюника в целом сохраняет идентичную конфигурацию, что придаёт теме дополнительную военно-политическую значимость. Научная новизна статьи заключается в том, что Капанская самооборонительная операция впервые становится предметом отдельного исследования в академическом поле и при этом рассматривается не изолированно, а в более широком военно-политическом контексте соответствующего этапа войны.

К основным выводам относятся следующие: Капанская операция стала переломной не только на оперативном уровне в данном сегменте фронта, но и в целом в политико-стратегической парадигме организации войны, отобрав у противника инициативу и монополию на определение географии наступления.

Ключевые слова: *Капанская самооборонительная операция, армяно-азербайджанский вооружённый конфликт, Капан, Вазген Манукян, Юрий Хачатуров, военно-политическое управление, деблокада Капана.*